

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Ս. ՆԵՐՍԵՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Գեր. տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, որպես նախագահը ս. Ներսես վարժարանի վարիչ մարմնի, մեզ հաղորդում է, որ բարեշնորհ Հովհաննես սրկ. Գասպարյանը ուսուցիչ է նշանակվել Նյու-Յորքի հայոց առաջնորդարանի հովանու ներքո դաստիարակվող քահանայացու աշակերտների, որոնք սովորում են Գրեստվուրդ (Նյու-Յորք) ս. Վլադիմիր օրթոդոքս ճեմարանում: Այս նոր պաշտոնի ստեղծումով աշակերտները առիթ են ունենում սովորելու հայերեն, գրաբար և աշխարհաբար, ծիսագիտություն, կրոնական արարողություններ, շարականներ, ազգային-եկեղեցական պատմություն և այլ եկեղեցագիտական առարկաներ, բացի իրենց առօրյա դասընթացներից, որոնց հետևում են, համաձայն ս. Վլադիմիր ճեմարանի ուսումնական ծրագրի:

Հովհաննես սարկավագի պարտականությունն է նաև գտնել ու պատրաստել ոչ միայն հոգևոր պաշտոնյաներ, այլև այնպիսի երիտասարդներ, որոնք կարողանային եկեղեցու մեջ որիշ պաշտոններ կատարել. լինել կիրակնօրյա վարժարանների տեսուչներ, ուսուցիչներ, երիտասարդաց կազմակերպության ղեկավարներ և այլն:

Ս. Վլադիմիր աստվածաբանական ճեմարանի տեսուչ հայր Ալեքսանդր Շըմեմենին հայտնել է նաև ս. Ներսես վարժարանի վարիչ մարմնին, որ ս. Վլադիմիր ճեմարանը տրամադիր է հայագիտական և եկեղեցագիտական հայկական դասընթացները ընդունել ակադեմիական չափանիշով՝ իբրև մաս ճեմարանի ընդհանուր ծրագրի: Այս նախաքայլով կարելի կլինի ստեղծել հայ եկեղեցագիտական մի մասնաճյուղ՝ իբրև ամբողջական մաս ճեմարանի ուսումնական ծրագրի:

Ծրագրվում է նաև հիմնել մի **հայկական տուն** ճեմարանի մեջ, հայ ուսանողների համար, երբ նրանց թիվը հասնի յոթի, որպեսզի այն դառնա ոչ միայն բնակարան, այլև ուսումնարան՝ հայ աշակերտներին եկեղեցագիտական և հայկական գիտելիքներ սովորեցնելու:

1969—70 ուսումնական տարում չորս հայ երիտասարդներ (ամերիկահայեր) արձանագրվել են ս. Վլադիմիր ճեմարան՝ սովորելու: Երկու այլ ուսանողներ սովորում են աստվածաբանական այլ ճեմարաններում:

Ներկայումս մեծ կարիք է զգացվում հոգևորականների, ինչպես նաև եկեղեցական այլ ասպարեզների համար պաշտոնյաների՝ Ամերիկայի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան թեմերում: «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ»: Հոգևոր ծառայության կոչված մեր երիտասարդները ծրագրված է, որ, ԱՄՆ-ի մեջ ստանալուց հետո իրենց ընդհանուր ու հիմնական կրթությունը, որոշ ժամանակ էլ կատարելագործվեն ս. Էջմիածնում կամ Միջին Արևելքում գտնվող հայկական կրոնական հաստատության մեջ, որպեսզի առավել ևս թրծվեն հայ հոգով ու շնչով: Ամերիկայի մեջ մեր եկեղեցու կենսունակությունը կախված է եկեղեցական և աշխարհիկ մեր հավատավոր գործիչներից: Եթե այժմ կարող ղեկավարների պատրաստության հարցը չծրագրվի, ապա վաղը հայ համայնքը կարող է կանգնել մտահոգիչ կացության առաջ: Հոգևորականության և կամ եկեղեցու այլ աշխարհական ասպարեզների թեկնածության համար դիմողները կարող են հաղորդակցվել ս. Ներսես վարժարանի վարչության հետ, գեր. տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի, ինչպես նաև արևելյան թեմի առաջնորդ գեր. տ. Եղիշե եպս. Սիմոնյանի հետ:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմորեն ողջունում ենք ս. Ներսես վարժարանի վարիչ մարմնի նախագահի և անդամների արտագին նախաձեռնությունը և հաջողություն մաղթում բարեշնորհ Հովհաննես սրկ. Գասպարյանին՝ իր նոր և պատասխանատու պաշտոնի և ծառայության մեջ: